

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՆՈՐԱԿԵՐՏՈՒՄՆԵՐԸ

Ռ. Ռ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գրողի ստեղծագործության նշանակությունը ազգային մշակույթի համար որոշվում է նաև նրանով, թե ինչ ազդեցություն է թողել այն լեզվի բառապաշարի հարստացման ու զարգացման վրա:

Արդի գրականության մեջ ինքնատիպ անհատականությամբ աչքի ընկնող գրող է Հր. Մաթևոսյանը: Նրա պատումաշարը կյանքի ու մայրենիի կենդանի ընթացքի գունեղ արտացոլումն է:

Հր. Մաթևոսյանը համարձակ, անկաշկանդ նորարար է, հմտորեն օգտւելով մեր լեզվի բառակազմական ներքին, ճկուն ու հարուստ հնարավորություններին, բոլորովին նոր ձևերով ու միջոցներով է կազմում նոր բառեր: Նրա կազմած նորաբանություններն աչքի են ընկնում իմաստային ու արտահայտական նրբությունների բազմազանությամբ:

Որպես բառակազմական հիմնական միջոց, Մաթևոսյանն օգտագործում է բառաբարդումը և բարդ բառեր է կազմում տարբեր կաղապարներով: Ահա հեղինակի առավել գործածական տիպերից՝

ա) գոյական բաղադրիչների համադրմամբ, որոնք կազմում են նոր գոյականներ կամ ածականներ՝ վազրախտ (2, 107), հերթավեճ (2, 231), ձմեռախնձոր (2, 352), ծիծրենկեր (2, 489), տախտակաճւորթի (2, 522), շիվաձայն (2, 530), խոտահյուսկ (2, 530), մեռելաբան (1, 68), կորստատիրուհի (1, 77), հովվակրակ (1, 174), հայրենախտ (1, 541), գուններանգ (1, 343), արշախոտ (1, 388), դարչնագունություն (1, 420), ծարավախնձոր (2, 352), պաշտոնահաշ (2, 322), փետածծ (2, 11) և այլն,

բ) գոյականի և քայարմատի համադրմամբ՝ օժիտակալ (2, 45), սխտորակոխ (2, 101), մանանաթափ (2, 57) և այլն,

գ) ածականի և գոյականի համադրմամբ, որոնք գոյականներ և ածականներ են դառնում: Ածականները ցույց են տալիս մի բանով օժտված լինելը, մի բան ունենալը՝ փակերեսություն (2, 85), նեղմիտ (2, 527), ծանրածնոտ (1, 317), պինդկրունկ (1, 376), խավարաչք² (2, 356), հակահուշ (2, 380), բացքամակ (2, 41) և այլն,

դ) ածականների համադրմամբ՝ դարչնաթուխ (2, 215), կարմրամոխրագույն (1, 295), կիսահիմար (2, 121), արկածահետախուզային (2, 133), հոգեբանա-փիլիսոփայական (2, 148), ուղամիջազգային (2, 173), դառնաքաղցր (2, 186) և այլն,

ե) ածականի և քայարմատի համադրմամբ՝ բարձրախելդ (1, 351), պնդակոփ (1, 365) և այլն,

զ) գոյականի և ածականի համադրմամբ գոյականը ածականի լրացումն է դառնում, և բարդությունն օգտագործվում է իբրև ածական՝ մոխրակարմրավուն (2, 174), ուսաբարձիկավոր (2, 361), կաղնեկարմիր (2, 137), հըրճվախառը (2, 238), սառցակուլտ (1, 482) և այլն:

Մաթևոսյանի գործածած վերը նշված նորաբանությունները չկան Ստ. Մալխասյանցի «Բացատրական բառարանում»: Քիչ չեն և հիշյալ կարգի այն բա-

¹ Տե՛ս Հր. Մաթևոսյան, Երկեր, հ. 2, Երևան, 1985: Գրքից արվող մեջբերումների էջերը կնշվեն ընագրին կից:

² Խավարաչ ձևը տե՛ս է դ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Ա-2, Երևան, 1976, էջ 532:

ոները, որոնք մոտավել են էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան» (խոսքակարկուտ, ծանրածնոտ, փարմրամոխրագույն, հովվակրակ, մարդահաշ, նեղմիտ, շեքամեջ, ուղիղալք), այսինքն՝ սրանք դադարել են հեղինակային նորարանություններ լինելուց և մտել են արդի գրական հայերենի ֆոնդ:

Հորդդի նորակերտումները բառամիջավայրում իրենց տեղում են, անփոխարինելի, որովհետև ունեն իրենց ոճական դերը տվյալ բնագրում: Այս բառերը երբեմն փոխաբերական, բաղադրիչները հոմանիշներից կամ հակահիշներից կազմված մակդիրներ են և խոսքի պատկերավորման լավագույն միջոց: Այսպես՝ Ծովեզերքին ինը բերդով երկու մեծ կղզի կա, որոնցից մեկը կռվում է Ահմադ-վար և ունի պնդակալի բերդ ու հին վանք (1, 365): Աղունի արտին մի կաթիլ դառնափաղջ լեզի կաթին: Աղունը ղդաց կաթոցի հզումը (2, 33), Խեմնանեծառ ու հպարտ որպաս այս երկրի միակ տեր՝ մենք մյուս օրը դարձյալ մեր նեոլգի վրա էինք (2, 474):

Բազմաբանակ են հեղինակի կազմած ու գործածած բաղադրյալ բառերը, որոնց մեջ մեծ ու կարևոր տեղ են բռնում բաղճյուսական բարդությունները՝ Վիրանք, իբրև ինքնուրույն ու անկախ իմաստային միավորներ, սերտորեն ու անմիջականորեն առնչվում-կապվում են լեզվի քերականական կառուցվածքի, մասնավորապես՝ բառերի սովորական շարահյուսական կապակցությունների հետ և, ծագելով դրանցից, բարդ ու բազմազան հարաբերություններ են արտահայտում³³։ Լեզվաոճական կարևոր միջոց են վերլուծական կազմություն ունեցող բաղճյուսական՝ հոմանիշների զուգագործմիջ և իմաստով ոչ այնքան մոտ, նույնիսկ հականիշ բառական միավորներով կազմված հարադրությունները։ Սրանք մեծ մասամբ իմաստով մոտիկ, համահնչուն ու ներդաշնակ բառական միավորներ են, որոնք հեղինակն օգտագործում է պատկերների, իմաստների նրբորանգություն ստեղծելու նպատակով։ Մասթևոսյանը, ժողովրդական դարավոր փորձի ծալքերը բացելով և դրանց ներբությունները բացահայտելով, ավելացնում է իր ժամանակի և իր նոր փորձը։ Բառականություն այս ձևը առաջ է բերում խտացրած պատկերների՝ փոխաբերական, փոխանունական արաբ գ ու ճիշտ ընկալումներ։ Ահա այդ բազմազան հարաբերություններն արտահայտող անվանական հարաբերություններից։

ա) բաղադրիչները հոմանիշներ են, իմաստով մոտ՝ հեշերդ-անձրև, ան-
արմատ-անակոնք, չընկեր-հակակիր, ընկեր-համակիր, անվերջ-անսպառ,

բ) բաղադրիչները հակահիշենք են՝ արժան-անարժան, կարելիություն-անկարելիություն, քաղցր-կծու, հանցավոր-անմեղ, ամոթխած-հանդուգն, կարմիր-սև և այլն,

դ) բաղադրիչները հավասարաթիվ են կամ առաջին մասը դառնում է երկրորդի բնութագրական մակդիրը՝ ղրսևտրելով առարկայի ներքին հատկանիշները, առարկայից ստացած գրողի տպավորությունը՝ աղջիկ-թուռ, ջիւպանիր, աղջիկ-բերիսա, ձուկ-մկան, լույս-արև, բանթող-մայրամուտ, կիթլոր-նրկեմուհի, արև-աստված, քրոմ-սապոգ, փափուկ-խանդեմ եւ այլն,

դ) բաղադրիչները բարդ բառեր են կեսքուն-կեսարթուն, կեսկատակ-կեսսուր, խոտուկետ-կոպագոմ,

բ) բաղադրիչներ նույն արմատն ունեն՝ մարգ-մարդաշունչ, ճաղատ-կիսաճաղատ, բեռնատար-մարդատար,

զ) բաղադրիչները նույն ածանցով են՝ անզոր-անճար, անլեզու-անթուրուսվանք, լափնջափոր-ձիափոր,

է) բաղադրիչներից մեկը բարբառային, ժողովրդախոսակցական է, մյուսը՝ գրական՝ էրաթաթ-յանց, ոտաշոր-վարտիք և այլն:

Հանդիպում են նաև եռաբաղադրիչ բարդություններ՝ փոխինձ-ձավար-հաց, կարմիր-կանաչ-նարնջի, բարի-շար-աստված, հայր-մայր-հորթ, Պալին-Պրժե-մյալսկի-Կասախցսկի, մեղադիր-անմեղ-հարակից, ձեռ-ոտ-գլուխ, զնգուն-զվարթ

Յ Այ. Մ ա Ր Ք ա Ր յ ա ն, Հ ա յ ե Ր ե ն ի բ աղ հ յ ու ս ա կ ա ն բ ա Ր ղ ու Գ յ ու ն ն ե Ր ը, Ե Ր կ ա ն, 1986, է ջ 3:

ավազակ: Կան քառաբաղադրիչ և բաղմաբաղադրիչներով վերլուծական բարդություններ՝ նկարիչ-նկարչուհի-ամուսին-աշուն, սեղան-գրասեղան-պահարան-լուսամուտագոգ-անկողին-աթոռ-հատակ, նկարիչ-բանաստեղծ-օրենսդիր-զորավար և այլն: Կան հարադրություններ, որոնց կազմության հիմքում ընկած են փոխաբերություն, փոխանունություն, պատճառահետևանքային կապ և այլն, օրինակ՝ մայր-հոգ բարդության հիմքում համեմատությունն է (հոգը մոր նման է), ընկեր-եզ, այսինքն աշխատանքի ընկեր, կամ գյուղ-քաղաք բարդության հիմքում փոխանունությունն է՝ ամենուրեք, այդպես էլ՝ տուն-տեղ, իրիկուն-առավոտ, հարևան-բարեկամություն, հայր-մայր-հորթ և այլն: Մաթևոսյանն իր արձակը հարստացրել է նաև բառական կրկնություններով, որոնք առավելապես հատուկ են բանավոր ժողովրդախոսակցական լեզվին: Կրկնավորներն օգտագործում է ոճական նպատակով, ստեղծում իմաստի ինտենսիվություն: Երբեմն կրկնվող բաղադրիչները որոշ հնչյունափոխության են ենթարկվում և իմաստային նրբություն արտահայտում. օրինակ՝ ինքը նայեց Մարտիրին ու տեսավ, որ բանակային հագուստը նրա վրա մազը-մազին ճիշտ նստած է (1, 147): Գոմեշը կանգնած մնաց՝ մինչև որ ոգնին իշներեց փշերը, փոքրիկ գլուխը հանեց, նայեց պսպղուն աչքերով և աղաթ-վլաթ փախավ արահետից (1, 408): Նրա հետ մենք արգելափակոցը զնդպեցինք, ցցեր տակեցինք, հեծանի վրա ծակեր բացեցինք, մի ճով-ճօր կողպեք հարմարեցրինք (2, 458): Իմ ունեցածից տալիս եմ, էս խառու-մա-մառու-ման, խնձոր-մենձոր, հինգ հարյուր հատ ձու-մուն (2, 35): Արտավազը արահետից մի կողմ քաշվեց ու թլիկ-թլիկ հրահանգեց (2, 67): Քանզի բարձրագույն կերթության վկայական չունի. թնիս-մեհիս, նստարան-մսատրան է նորոգել տալիս Սիմոնին (2, 73):

Մաթևոսյանը բառակազմական ներքին միջոցներից հմտորեն օգտագործում է նաև ածանցը: Հաճախ է պատահում ռա ածանցի կիրառությունը. ածանցն ունի տեղի, տարածական իմաստ, որն արտահայտում է արմատով նշված առարկայի շատությունը՝ աճարկուտ, ոսկրուտ, լորուտ, դազձուտ, հոնուտ, մամխուտ, եղեգնուտ, աղուտ, եղինջուտ, մորուտ, կաղամբուտ, քար-քարուտ, անտառուտ, ճլկուտ, ծմակուտ, բոխուտ, բուրուտ, ցակուտ, թփուտ, քեղուտ, գոմշուտ, մամռուտ, մոշուտ, խանձլուտ, խնձորուտ և այլն: Բավական շատ են օգտագործվում մակբայակերտ ածանցները, որոնք գրվելով տարբեր խոսքի մասերի վրա, ստեղծում են նոր մակբայական ձևեր՝ սրանցավարի, իրարավարի, քեղավարի, մերավարի, իշխանավարի, աքլորավարի, համերգավարի, թատերավարի, մացակավարի, մեղրորեն, դպրոցականորեն, կուսակցական-բանակայնորեն, ծաղրածուորեն, գեղջկուհիորեն, կաղնիորեն, փխրորեն, համովորեն, քաղաքականորեն, վարունգաբար, անտառամեջաբար, եվրոպաբար և այլն: Նա նոր բառեր է կազմում և այլ ածանցներով՝ ճաշացու, տնացու, սիմոնացու, վալոդացու, մերացու, շերեփացու, քույրացու, տակաշորացու, մոտոցիկլավոր, մորթավոր, ամոթավոր, տղամարդավոր, սոխավոր, վանքերեցի, սեքարեցի, ձիություն, ովություն, սարեցիություն, սխալականություն, գյուղացիություն, կեչիական, դուական, տիրոջական, կիսամուրազական, ծառային, ծիսիկային, համածմակուտային, քանդարար և այլն:

Հր. Մաթևոսյանի գեղարվեստական արձակում բազմաթիվ են ժողովրդախոսակցական լեզվի բառաշերտի անբաժանելի մասը կազմող բայական հարդրությունները: Դրոշն օգտագործում է կառուցվածքային տեսակետից բազմազան նոր հարադրություններ, համարձակորեն կազմում է նորերը՝ նոր ձևերով: Դրանք խոսքի ժողովրդական շունչ և երաժշտականությունն տվող լեզվաոճական միջոցներ են: Հեղինակը առավելությունը տվել է բառերի հարդարական ձևերին՝ օգտվելով բայական հարադրությունների գրեթե բոլոր տեսակներից: Սրանք իբրև ռեառային կազմի կառուցվածքային միավորներ, օժտված են իմաստի ամբողջականությամբ, ձևային կայունությամբ և ար-

տառանական միավորվածությունը⁴։ Խոսքաշարում սրանցից շատերը յուրահատուկ լեզվական գեղեցկություններ են՝ իրենց հրկիմաստներով՝ Ուրիշներն իրենց խոսքերը բերել են, մեր խոսքը մնաց սարում, բա որ ձյուն դրեց, դժվար կլինի չէ՞, ա՛յ հեր (2, 8)։ Հաղթող տղամարդու մեր ծիծաղը դալիս էր, ծառի հտակից մենք աչքառ հանեցինե՛ք, սուրոցով ու մատով կանչեցինք (2, 431)։ Պայծառ աչքերում կարեկցանք՝ խումբը լուռ մտափայլ է անում (2, 597)։ Երբեմն էլ խոսքը պատկերավոր ու արտահայտչական է դարձնում՝ օդովելով՝ հարադրությունների փոխաբերական իմաստից. օրինակ՝ Պառավն ականջ պահեց, բայց երևի չճանաչեց մոր ձայնը (1, 260)։ Եվ մեր սիրտն ուղղակի ծուլ եղավ (2, 517)։ Էդ ո՞վ է, որոտացին Քառանց բլրից, — էդ ո՞ւմ լակոտն է ծառի վրա կկու կտրել (1, 517)։ Հա՛, ձեռքդ բերանիդ հասա՞վ (2, 16)։ Պառավի յուղի հախից մի լավ եկան, կճուճը կես էր ընկել (2, 16)։ Արմենական էդ. ցավիցն ազատ է, գնում ենք գլուխը յուղենե՛ք, գանք (2, 73)։ Գումարը և՛նրս՝ կանեն (2, 410) և այլն։

Մաթևոսյանի արձակում գործածված են՝ ա) գրական բառաշերտին բնորոշ հարադրություններ, ինչպես՝ կանդ առնել, լաց լինել, ցույց տալ, կո՛ւժ տալ և այլն, բ) ժողովրդախոսակցական շերտին բնորոշ հարադրություններ, որոնք խոսքին հաղորդում են կենդանություն, բնականություն, ընդգծում երևույթը, կերպարի անհատականությունը դարձնում առավել ցայտուն։ Այսպես՝ Քու փետածծե՛ր ինձ տակ շարեց (1, 11)։ Անասնաբույժն ինձ համարյա առաջկարուկ էր անում (1, 120)։ Մեղուս ձագ է տվել, փեթակ չունեմ, կամ սարքածը կունենաս, կամ էդուց-էլոր մի հատ իրաց արա (1, 160), Փոքր հորեղբայրս առ փախեց (1, 312), Իսկ Լևոնը, որ կանգնած էր զրուցողներից ուրիշ խմբի մեջ՝ արագրեց. «Մի՛նչ է՝ առդեն սկսե՛ր չլիխն գոռ տալ» (1, 329), Լեոնների արանքից քամին փախս է ընկնում ու կոացնում ծառերը (1, 521)։ Ասատուրը Գառնաբարի փարախում ծափ գարկեց ու զարմացավ շան պառավության վրա՝ «պա՛ քու տունը շինվի» և ձեն արավ Գառնաբարից ուրթ (1, 537)։ Հերը զոհված մեծ տղի վրա երգ էր կապել (1, 567)։ Գնացինք գոմի դռանը քիկունե՛ք տվինե՛ք (2, 421)։

գ) Պասսիվ բառաշերտին բնորոշ հարադրություններ, որոնք առավել հաճախ են գործածված հեղինակի՝ դյուզը պատկերող գործերում։ Սրանք այն հարադրություններն են, որոնք հասկանալի են միայն աշխարհագրական տվյալ տարածքում ապրող, տվյալ բարբառով խոսող մարդկանց։ Այս դեպքում խոսքը վերաբերում է Լոռուն. այսպես՝ Օժիտի կարպետը դարպասեցին էդ արանքներում տակվե՛րոց արեց (այսինքն՝ գողացավ, թաքցրեց՝ սեփականացնելու միտումով), Սիրտ պատռելու չափ դանդաղ աչքառ ելավ (հայտնե՛վեց, երևաց աչքի առաջ), լրիվ ու արահետի վրա օրորվեց իր գայթող քայլվածքով, Կայարանը լիքը ժողովուրդ-աղջիկ, էս բեռներդ ական պսնիք (քանակը ճիշտ, լրիվ պահիր), Ա՛յ տակառապակ լինի (արմատից պոկ ըլի)՝ քո լեզուն, Տանձուտ խաղաղ հովտում տղան մտածեց բռն անել (բռնից ճյուղեր կտրել)։ Բնական է՝ այս հարադրությունների գրական համարժեքները չէին կարող նույնքան պարունակ ու հյուսված դարձնել խոսքը, չէին պահպանի գյուղական կոլորիտը։ Հաճախ էլ իմաստի սաստկացման նպատակով հարադրության հենց կողքին օգտագործում է նաև համադրականը։ Օրինակ՝ Զկա, — խելագարվեց Շուշան մորթուրը, — չի՛ք են կարել, չֆացել, խլացել են՝ չեն լսում (1, 523)։

Մաթևոսյանը բայական հարադրություններ է կազմում միության գծիկով, որոնց առաջին բաղադրիչը՝ անվանական մասը տարբեր խոսքի մասեր են՝ կուլ-գալ, վեր-խմել, վրա-տալ, վայ-կանչել, ետ-ոլորել, դուռնա-փչել, դհուլ-խփել, արմատ-տալ, դորք-կապել, մեջ-խառնել, կալկոխ անել, ավտոքշել և այլն։ Գրողն օգտագործել է զուգաբայական հարադրություններ, որոնց բաղադրիչները հարադրվելով՝ բառիմաստի մի ամբողջություն են ձևոր բե-

⁴ Ա. Աբրահամյան, Վերլուծականությունը հայերենի տարբեր մակարդակներում (ան՝ Պատմա-բանասիրական հանդես, 1972, № 3, էջ 42)։

րում: Սա ևս հատկանշական է ժողովրդական խոսքին, հեղինակի պատումին հաղորդում է յուրօրինակ, սեղմ ոճ: Հավատարիմ մնալով քչով շատ բան ասելու իր դավանանքին՝ Մաթևոսյանը գործածում է երկու գիսավոր բայերի միացությունը՝ կաղմված հարադրություններ, որոնք, ըստ Գ. Զահուկյանի, թվամ բայական մի նոր, դարձվածային իմաստ են արտահայտում, կամ հանդես են գալիս որպես կերպային արժեք ունեցող և բուն հատկանշային բայի կապակցություն, կամ աստիճանավորում-ուժեղացում են միևնույն իմաստը⁵։ Սիմոնը ստեղծ-փայլացել էր (1, 24)։ Նա այնտեղ խոտի տակ սկսվել մնացել էր (1, 160)։ Արահետը կտրեց-անցավ ոչ այն է գալլ, ոչ այն է նա-պաստակ (1, 173)։ Հեղինակի գործածած զուգաբայական հարադրություններում գրության միօրինակություն չկա։ Երբեմն դրանք գրում է գծիկով, երբեմն էլ առանց դրան՝ խոսել-ծիծաղել, գնացել-մոլորվել, եկել-նկատվել, իջեցրել-դարսել, գալ-հունցվել, ճղել բացել, եկել ընկել, գնացել պտտվել և այլն։

Ջուգաբայական հարադրություններ է կազմում՝ ա) հականիշներից՝ ընկել-եկնել, գնացել-եկել, լսել-չլսել, ծիծաղել-լացել, ընդունել-չընդունել և այլն, բ) հոմանիշներից՝ հանդել-հատել, խնդրել-աղաչել, ծակել-բացել և այլն, գ) բաղադրիչները նույն արմատից են՝ մեկնումեկը կրկնավոր է՝ իմաստի սաստկացմանը նպաստող՝ կապել-կապկապել, շողալ-շողշողալ, խաբել-խաբխաբել, խոսել-խոսխոսել և այլն։ Բայական հարադրություններ է կազմում երեք և ավելի բաղադրիչներից՝ ջարդող-կտրող-խուզող, իջնում-իջնում-կանգ է առնում, ոռնում-նվում-մեռնում է, հավաքվել՝ գնացել վեր էին ընկել, եկել կանգնել տեսել, եկավ տվեց անցավ, կանգնել նայել ուրախանալ, ուտել-ծարավել-խմել, լողացնող-սրբող-օծող, նայել-կերել-խմել-զբոսնել, Գործածություն ժամանակ բարդության բաղադրիչների մեջ երբեմն այլ անդամներ են ընկնում, օրինակ՝ Շատերն էլ թե՛ ներկայացուցիչն առել հաց էր ավել, իր տանը քնեցրել ու առել (2, 305)։ Երկրաբանի թե՛ լեռնագնացի մուրճը ձեռքին փափուկ մարզակոշիկներով եկավ ավեց լուռ անցավ (2, 156)։

Մաթևոսյանն օգտագործում է նաև վ ածանցով այնպիսի բայեր, որոնք գրական հայերենում գործածական չեն (երբեմն անգամ ավելորդ է վ-ի մուտքը), նման գործածությունները հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին։ Այսպես՝ Աղունը չուզեց պատասխանել, թե Սիմոնի արածը այդ տան վրա ոչինչ է, որ դրանք իր ջղերն ու կյանքն են, միայն ուզվեց ասվել լացով ու խղճահարությամբ և ծիծաղով (2, 12)։ Եվ մեր սիրտն ուղղակի ծուլ եղավ, ուղղակի շնչահեղձ եղանք ու լավեցինք «հոպար,—աբձազանքվեցինք,—հորեղբայր» (2, 517)։ Կնկա տունը գործարանում պիտի գտնվեր, ստացած փողերի թղթից հասցեն հանվեր ու հասցեով գնացվեր էն իբր, եթե Տաշքենդ է՝ Տաշքենդ (2, 340)։ Պիտի գնացվեր, տեսնվեր ձեռքերը մի երկու մանեթ դրվեր, կողքները մի քիչ նստվեր (2, 314)։ Սիրերն առավել ևս, իսկ չգողանալը նույնպես դժվար է, որովհետև հետո անընդհատ պիտի հիշվի, ող չեն գողացել ու պիտի զղջացվի (1, 404)։

Համակցական բայական հարադրությունները ևս բավականին գործուն են Մաթևոսյանի արձակում։ Հեղինակը խոսքը մոտեցնում է ժողովրդական ասացողների պատումի ձևին, որին հատուկ է գործողության սաստկացնելը՝ տպավորիչ ու ներգործուն դարձնելը։ Օրինակ՝ Տվեց վեր բերեց էդ երկու իր հասակի մարդուն (2, 256), Զանդառը քառնել ջուր էր կարել (2, 275), Վեռքը կանգնեց հավասար մի բան էլ ավելի կոն-կոնի ավեց (2, 339), այդպես էլ՝ քացի-քացի անել, հաղթել-դուրս գալ, երեխա-երեխա խոսել, եկել դեմ էր առել, ավել փորը պատռել էր, խփել պռոշը ճղել և այլն։

Հր. Մաթևոսյանի գեղարվեստական արձակում ուշադրության են արժանի բայական նորաբանությունները, որոնք կազմված են տարբեր խոսքի մասն-

⁵ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 413։

րից՝ բայական համապատասխան ձևույթներով: Այսպես՝ նա վալսեց, ծափահարեցին՝ նորեն պարեց (1, 335): Նրա երեխան աղ արեց իր ձեռքի մսին աղ պտղունցեց և սահելով իջավ նստարանին (1, 462): Տղան առանց եղանի՝ համարյա թե կարողացել էր դարսել և ոտքել խոտի բլուրը (1, 488): Ոչխարը՝ կմորթեն, կհամեմեն ու կսոխեն (2, 80): Երևի հավի, ներծծվել է աշխարհին, և աշխարհը որոշ շափով սոփիացրել (2, 42): Կրողը նոր բայեր է կազմում բարդ բառերից: Օրինակ՝ Հետո զառիվների գլխին կանգնեց, փռչտաց ու զառիվաբեց ների այծը դեպի գոմեշն ու այծը (1, 404): Տղայի քաթանի շապիկն ու շավարը կաղնեզունված էին կաղնու կեղևով (1, 517): Ծնեերը նուրաճաճեց, սատկում են (2, 251), Մոտ վազեց նրա կարգադրության շշուկը լսելու, բարձրաձայնելու (2, 449), Մի ծայրը թողեցին իրեն, մենք թևառալեցինք մյուս ծայրը (2, 456), Շոգեց, կարմրեց, առեց, մոխրագունեց (2, 403), Կյանքը բոլորիս է դառնաճամում (2, 308): Նոր բայեր է կազմում անխկական բարդություններից (կրկնավորներից ու հարադրություններից բայական ձևույթներ ավելացնելով): Իսկ մեր հերը բաթբաթում է (2, 249), Քամուց հետո՝ նրա շունը մի ընկած պիտի կտրվեր ու կաղկանձից հետո խոսիտեսին (1, 166): Նրա սպառնալի կոպերը ծածկոցի տակ հանգիստ վերսվառում էին (2, 238): Երեխան բլբլթում էր ու տաքություն էր տալիս (2, 12), Եվ նա ձանձրացավ, սուր ճարգուփորձեց գյուղացիների որպիսությունը (1, 55):

Բավական շատ բայեր է կազմել ավուր ածանց ունեցող ածականներից. այսպես՝ ընտանիքավորվել, փարախավորել, ժանիճավորվել, սգավորվել, ձիավորվել, կոշիկավորվել, երգավորվել, թոռնավորվել, կասկածավորվել, կոստյումավորվել, կարասավորվել, բաճկոնավորվել, հողավորվել, տախտավորվել, ախոտավորվել, միլիցավորվել, շնախանձավորվել, սապկավորվել, հրացանավորվել և այլն:

Այսպիսով, Հր. Մաթևոսյանի արձակն ունի բազմաճարտասա լեզու: Կարևոր է հատկապես այն հանգամանքը, որ նա մեր լեզվի գրական ձևերին, զուգահեռ գրեթե միշտ օգտագործում է ժողովրդախոսակցականը, որի շնորհիվ նրա ստեղծագործությունների լեզուն դառնում է առավել հյուսիս ու գրավի: Դրան նպաստում են նաև հեղինակի բառական նորարարությունները, որոնցից շատերը, կազմված լինելով ժողովրդին ու նրա լեզվին հոգեհարազատ ձևերով, դարձել են գործածական, մտել մեր բառապաշարի մեջ:

НЕОЛОГИЗМЫ Г. МАТЕВОСЯНА

Р. Р. ГЕВОРКЯН

Резюме

Произведения Матевосяна могут послужить богатейшим материалом для лингвиста, изучающего лексический и грамматический строй современного восточноармянского языка, а также происходящие в нем изменения.

Достоин внимания словотворчество Матевосяна. Писатель, опираясь на богатейшие возможности литературного армянского языка и его диалектов, создает множество неологизмов.

Неологизмы Г. Матевосяна с точки зрения их словообразовательной структуры группируются в тип сложных слов и аффиксальных. Особенно следует выделить модели именных новообразований, а также различного рода глагольные сложные слова, составные глаголы и глаголы, образованные сложением основ.